community

The New Apostolic Church around the world

02/2025/AM



Վախը հաղթահարել

Խմբագրական
Ամեն ինչ կատարված է

Ժամերգություն
Վախը հաղթահարել
Հիսուսի հետ

Վարդապետական ուսմունք
Ճիշտ վերարտադրել Աստծո
կամքը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ամեն ինչ կատարված է

Ժամերգություն

4 Վախը հաղթահարել Հիսուսի հետ

Ընդհանուր լուրեր

10 Ժամանակն է բարին անելու

Մանկական անկյուն

12 Հիսուսն այցելում է մաքսավոր Զակքեոսին

14 Այցելություն Լեոնարդին՝ Քինսեյլում / Իռլանդիա /

Տեսություն

16 Ճիշտ վերարտադրել Աստծո կամքը

Շապիկի երեսի լուսանկարը՝ ՆԱԵ Սան Ֆրանցիսկո
Շապիկի ետևի լուսանկարը՝ Դեդի Ֆեբրիյոնոյի

Ամեն ինչ կատարված է:

Լուսանկարը՝ Միջազգային ԱՄԵ

Մենք չենք կարող բոլորովին պատկերացնել, թե ինչ էր կատարվում մեր Տեր Հիսուսի սրտում, երբ նա խաչի վրա ասում էր՝ Ամեն ինչ կատարվեց /Հովհ. 19,30/:

Գեթսեմանի այգում Հիսուսը երկխոսություն է փնտրում Հոր հետ՝ նրան տեղեկացնելու իր զգացումների մասին: Նա գիտեր, որ Աստված ամենազոր, ամենագետ և կատարյալ է, և նա ամենից առաջ գիտեր, որ Աստված սիրում է իրեն: Սակայն, որպես ճշմարիտ մարդ, Հիսուսը վախենում էր այն ամենից, ինչ կատարվելու էր իր հետ: Նա գերմարդ չէր: Ներքին եռանդուն պայքարից հետո նա որոշեց վստահել Աստծուն՝ թող քո կամքը լինի/ Ղուկաս 22,42 /: Նա գիտեր Հոր կամքը և ուզում էր այն մինչև վերջ կատարել:

Խաչի վրա Հիսուսն իրեն զգում էր Աստծո կողմից լքված: Դա ավելի շատ էր ցավեցնում նրան, քան՝ իր վերքերը: Այնուամենայնիվ, այդ զգացումը հարցականի տակ չէր դնում Աստծուն վստահելը: Ընդհակառակը՝ նա իր ողջ էությունը Աստծո ձեռքերում է դնում: Իր մահվան պահին Հիսուսը կարող էր ասել՝ Ամեն ինչ կատարվեց: Աստված լսել էր նրա աղոթքները և նրան ուժ էր տվել՝ իր առաջադրանքը կատարյալ կերպով իրականացնելու:

Հիսուսի նման մենք էլ կապի մեջ լինենք Աստծո հետ: Ամեն ինչ վստահենք նրան, իսկապես ամեն ինչ՝ մեր ուրախությունը, մեր մտահոգությունները, մեր վախերը, մեր կասկածները, մեր ցանկությունները: Սովորենք վստահել Աստծուն- նրա զորությանը, նրա իմաստությանը և նրա սիրուն: Սովորելու պրոցեսը երբեմն պահանջում է ներքին եռանդուն պայքար: Երբ մենք աղոթում ենք Աստծուն ասելով՝ ,, Թող քո կամքը լինի,, ; դրանով խնդրում ենք Աստծուն՝ ուժ տալ մեզ: Այդ աղոթքը Աստված լսում է:

Սրտանց ողջույններ

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Վախը հաղթահարել Հիսուսի հետ

Լուսանկարները՝ ՆԱԵ Սան Ֆրանցիսկո

2024-ի հոկտեմբերի 13-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ժամերգություն տոնեց Սան Ֆրանցիսկոյում / ԱՄՆ /

Հովհաննես 14,1

Թող ձեր սրտերը չխռովվեն: Հավատացեք Աստծուն, հավատացեք և ինձ:

Սիրելի քույրեր և եղբայրներ, այն ծրագիրը, որ ես ստացել եմ այս օրվա համար, վերնագրված է այսպես՝ Շնորհակալ եղիր Աստծուն: Անցած կիրակի ես Գերմանիայում անցկացրեցի Գոհաբանության տոնի ժամերգությունը: Երբ մենք տոնում ենք Գոհաբանության տոնը, առանձնահատուկ կերպով շնորհակալություն ենք հայտնում Աստծուն՝ մեր երկնային Հորը: Մենք նրան առանձնահատուկ զոհաբերություն ենք մատուցում, տոնում ենք առանձնահատուկ ժամերգություն, երգում ենք զոհաբանական երգեր: Սակայն, մենք պատճառ ունենք ամեն կիրակի, ամեն օր շնորհակալություն հայտնելու մեր Արարչին: Նա տալիս է մեզ այն, ինչի կարիքը մենք ունենք մեր առօրյա կյանքում: Բավարար չէ միայն պարզապես շնորհակալություն հայտնելն ու զոհաբերություն կատարելը: Մենք պետք է այն շնորհները, որոնք մեզ է տալիս մեր

երկնային Հայրը, օգտագործենք բարին անելու համար: Դա հրաշալի ձև է Հայր Աստծուն՝ Արարչին շնորհակալություն հայտնելու համար:

Մենք շնորհակալ ենք Որդի Աստծուն իր զոհաբերության համար, իր ուսմունքի համար, որ նա հիմնել է իր եկեղեցին և ուղարկել է իր առաքյալներին: Նա մարդկանց առաջ բացել է դեպի փրկություն տանող ճանապարհը: Նա հնարավոր է դարձրել, որ մենք հասնենք մեղքերի քավության: Ուեմն՝ մենք կարող ենք նրան շնորհակալություն հայտնել նրանով, որ ներդնենք մեր շնորհները: Մենք նրան ներման համար շնորհակալություն ենք հայտնում նրանով, որ մենք էլ ենք ներում մեր մերձավորին: Մենք շնորհակալություն ենք հայտնում նրան եկեղեցին նվիրելու և առաքյալների ծառայության համար նրանով, որ մասնակցում ենք ժամերգություններին և ընդունում ենք այն, ինչ նա առաջարկում է մեզ: Մենք շնորհակալություն ենք հայտնում Սուրբ Հոգի Աստծուն, ով մեզ հնարավորություն է տալիս Քրիստոսով նոր արարած դառնալու և Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելու:

Այսօր մենք աստվածաշնչյան մի հետաքրքիր խոսք ունենք: Երբ ես ժամերգության համար աստվածաշնչյան խոսք եմ գտնում, ես նախ պետք է ստուգեմ, թե արդյոք այն վերջին ամիսների ընթացքում արդեն օգտագործվել է, թե՝ ոչ, և արդյոք այն բոլոր լեզուներում է առկա: Ես հայտնաբերում եմ, որ այդ նույն աստվածաշնչյան խոսքը տարբեր լեզուներով տարբեր կերպ է թարգմանված: Անգլերենում և իսպաներենում այսպես է ասվում՝ Դուք հավատում եք Աստծուն, հավատացեք նաև ինձ: Սա նորություն էր ինձ համար, քանի որ գերմաներենում և իմ մայրենի լեզու ֆրանսերենում այլ կերպ է ասվում՝ Հավատացեք Աստծուն, և հավատացեք ինձ: Այսինքն նույն խոսքը չէ: Երկու թարգմանություններն էլ ճիշտ են, հունական բնագրում կարող են և այսպես, և այնպես թարգմանել:

Մեր աստվածաշնչյան խոսքի տողերում Հիսուսն իր աշակերտներին տեղեկցնում է իր տառապանքների ու մահվան մասին, ինչպես նաև՝ Հուդայի դավաճանության և Պետրոսի ուրացման մասին: Դա անհանգստացնում է աշակերտներին: Նրանք իրար հարցնում են, թե դա ինչ է նշանակում: Հիսուսն ասում է՝ Թող ձեր սրտերը չխռովվեն : Անգլերենի տարբերակով կինչի այսպես՝,, Դուք հավատում եք Աստծուն, հավատացեք նաև ինձ,,: Ինձ դուր է գալիս այս թարգմանությունը: Որպեսզի այն ամենը, ինչ տեղի ունեցավ, կարողանային հաղթահարել, Հիսուսն իր աշակերտներին հորդորում է հավատալ Աստծուն- բայց այլևս ոչ այնպես, ինչպես իրենց սովորեցրել են իրենց ավանդույթի համաձայն: Հիսուսը նրանց բացահայտում է Աստծո ճշմարիտ բնությունը և ճշմարիտ կամքը: Դրան պետք է նրանք հավատային:

Աշակերտները հավատացյալ հրեաներ էին: Նրանց համար Աստծո կամքն արտահայտվում էր Տասը պատվիրաններում, Մովսեսի օրենքում: Նրանք կարծում էին որ եթե դրանք պահեն, ապա ամեն ինչ կարգին կլինի- օրհնված կլինեն, Աստված կօգնի, նա կտա առողջություն և բարեկեցություն՝ կդառնան երջանիկ մարդիկ: Դա հրեական ավանդական հավատ էր, որով դաստիարակվել էր Պետրոսը: Երբ Հիսուսն ասում էր, որ նա Երուսաղեմում պետք է ձեռբակալվի և սպանվի, Պետրոսն ասում է, դա չի կարող լինել: Հիսուսը մի հեզ հրեա էր և հետևում էր պատվիրաններին: Այդ դեպքում Աստված չէր կարող թույլ տալ, որ նա ստիպված լինի տառապել: Հիսուսը պարզ բացատրում է, որ երևույթները այդպես չեն ընթանալու: Հին հավատը… Այն ժամանակ հավատում էին, որ Աստված մարդկանց պատժում է, եթե նրանք հնազանդ չեն լինում: Սա խոր արմատացած էր հերական ժողովրդի հավատքի մեջ: Եթե որևէ մեկը կույր, կաղ կամ աղքատ էր, դա նշանակում էր, որ այդ մարդը կամ նրա ծնողները Աստծո հանդեպ անհնազանդ են եղել: Քանի որ, եթե նա կույր է, ապա Աստված պատժել է, քանի որ որևէ մեկը մեղք է գործել: Հնազանդ մարդու հետ նաև բան չի կարող պատահել: Դժբախտությունը համարվում էր աստվածային պատիժ: Հին հավատ…

Իսրայելի ժողովուրդը վստահաբար համոզված էր այն բանում, որ ընտրյալ ժողովուրդ է, և Աստված իր ժողովրդին կպաշտպանի այլ աստվածների հավատացող իրենց թշնամիների դեմ պայքարում: Իրենց հասկացողությամբ Աստված ատում էր Իսրայելի թշնամիներին և նրանց մահն էր ցանկանում: Բոլոր մեղավորները պետք է հեռացվեն, իսկ Աստված դրանում իրենց կօգնի: Հիշենք Պողոսին՝ երբ զինվորներն ուզում էին Հիսուսին ձերբակալել, նա վերցնում է իր սուրը և կտրում նրանցից

Եկեք այս շնորհներն օգտագործենք բարին անելու համար ու նախապատրաստվենք Քրիստոսի գալստյանը:

մեկի ականջը: Հին հավատ՝ Աստված պաշտպանում է իր ժողովրդին իր թշնամիների դեմ պայքարում: Նրանք սպասել էին Մեսիային: Նրանք տեսնում էին, որ Իսրայելը լավ վիճակում չի գտնվում և համոզված էին, որ Աստված իրենց համար՝ որպես ընտրված ժողովրդի, մի թագավոր է ուղարկելու, իսկ Իսրայելի թագավորությունը նորից է վերականգնվելու: Իսկ հետո նրանք ապրելու են խաղաղության մեջ ու բարեկեցիկ կյանքով, և ամեն ինչ լավ է լինելու, այնպես, ինչպես առաջ էր: Հին հավատ…

Աստված սիրում է նաև նրան, ով չի հետևում Հիսուս Քրիստոսին: Առանց նախապայմանների:

Հիսուսն ասում էր՝ Դուք հավատում եք Աստծուն, հավատացեք նաև ինձ: Նրանք պետք է հավատային իր անձին և իր ուսմունքին, քանի որ հին հավատով նրանք չեն կարող առաջիկա իրադրություններում հեռուն գնալ: Հիսուսը բազմիցս ասել է՝ ձեզ այս կամ այն բանն են ասել, բայց ես ասում եմ ձեզ, թե որն է Աստծո կամքը: Աստծո կամքն այն է, որ դուք ինձ հավատաք, որ դուք հավատաք իմ ուսմունքին, որ դուք հավատաք, որ ես Աստծո կողմից եմ ուղարկված, որ դուք հավատաք իմ զոհաբերությանը, որ դուք հավատաք փրկություն տանող իմ ուղուն: Աստծո կամքը կայանում է նրանում, որ սիրեն Աստծուն և սիրեն մերձավորին: Արեք այդպես, իսկ Աստված կօրհնի ձեզ:

Հիսուսը պարզաբանում էր նաև, որ Աստծո օրհնաքն այն չէ, ինչը ըմբռնում էին հին հավատի համաձայն: Նա չէր եկել, որ բժշկի բոլոր հաշմանդամներին ու կույրերին: Նա չէր եկել, որ լուծի մարդկանց երկրային խնդիրները: Նա եկել էր, որ նրանց հավիտենական կյանք, Աստծո հետ միասնություն տա նրա թագավորությունում, որտեղ ոչ մի չար բան չկա, այլևս ոչ մի մեղք չի գործվում: Սա է Աստծո կամքը: Նա ուզում է մեզ ազատել չարի տիրապետությունից:

Իսկ եթե չեն հետևում Աստծո կամքի՞ն: Ապա, այսպես է հայտնում Հիսուսը՝ Աստված դրա համար ոչ մեկին չի պատժում կամ սպանում:: Աստված պատժող Աստված չէ: Անգամ, եթե որևէ մեկը որոշում է չնազանդվել նրան, եթե չի հետևում Հիսուս Քրիստոսին, Աստված նրան շարունակում է սիրել՝ առանց նախապայմանների: Ինչ էլ որ մարդն անում է, Աստված նրան միշտ սիրում է նույն սիրով: Նա մարդուց երբեք երես չի թեքում:

Իսկ ինչ է լինում մեր թշնամիների հետ: Հիսուսն իր աշակերտներին սովորեցնում էր, որ իր թշնամիները նրանք չեն, ովքեր ուրիշ բաներին են հավատում, ովքեր այլ Աստծու են երկրպագում: Իսկական թշնամիները մեղավորները չեն, այլ՝ մեղքը, չարը: Բայց աշակերտները պետք է նրան վստահեն, նա հաղթելու է չարին և օգնելու յուրայիններին՝ դա հաղթահարել: Նա խոստանում է, որ նորից է գալու և նրանց տանելու իր թագավորություն, որն այս աշխարհից չէ: Այն Աստծո մոտ է՝ երկնքում:

Այդ ամենն էր նկատի ունենում Հիսուսը, երբ նա իր աշակերտներին ասում էր, որ լավ է, եթե նրանք հավատում են Աստծուն, բայց պետք է նաև հավատան իրեն, իր ուսմունքին: Նրանք պետք է հավատային Աստծուն, ինչպիսին Հիսուսն էր նրան բացահայտել նրանց առաջ: Այդ դեպքում նրանք կարող են հաղթահարել այն իրավիճակը, որը լինելու է առաջիկայում: Այսքանը նա ասաց

Սիրելի եղբայրներ և քույրեր, ինձ ցավ է պատճառում այն, թե ինչու եք տառապանքի մեջ մնում, ինչու եք ստիպված փորձությունների ենթարկվում, բայց դրա համար ոչ մի բացատրություն չկա: Ես չեմ կարող ձեզ ասել, թե ինչու եք դուք ստիպված այս կամ այն իրավիճակում հայտնվում: Ես չգիտեմ: Բայց վստահեք Հիսուս Քրիստոսի ուսմունքին: Նա մարդկանց ասում է՝ Աստված սիրում է ձեզ: Վստահեք նրան:

Եթե ձեր գործերը լավ չեն, ապա դա չի նշանակում, որ Աստված ձեզ մոռացել է: Դա չի նշանակում, որ նա ձեզ կշտամբում է: Վստահեք նրան: Նա ուզում է ձեզ վերջնականապես ազատել չարից և մահից: Նա ուզում է ձեզ տանել իր արքայություն: Հավատացեք Հիսուսին, նրա ուսմունքին: Վստահեք Աստծուն, վստահեք նրա սիրուն: Վերջում դուք տեսնելու եք, որ Աստված ձեզ իսկապես մեծ սիրով է սիրել: Հավատացեք Աստծուն: Հավատացեք Քրիստոսին, նրան՝ որպես անձ, նրան՝ որպես օրինակ: Ինչպես Աստված նրան է սիրել, այդպես էլ սիրում է նաև ձեզ:

աշակերտներին: Նույն խոսքը վերաբերում է մեզ այսօր՝ Թող ձեր սրտերը չխռովվեն: Հավատացեք Աստծուն և հավատացեք ինձ: Մենք ոչ միշտ ենք հասկանում, թե ինչ է լինում, իսկ դա անհանգստացնում է մեզ: Երբեմն մենք վախենում ենք: Մենք չգիտենք, թե ինչպես պետք է հաղթահարել տվյալ իրադրությունը: Հիսուսն այսօր առավոտյան մեզ ասում է՝ Հավատացեք Աստծուն, և հավատացեք ինձ:

Երբեմն մեզ անվստահ է դարձնում այն, երբ մենք տեսնում ենք, որ նաև շատ հավատացյալ մարդիկ են տառապում: Նրանք տալիս են իրենց լավագույնը, հավատարիմ են, ծառայում են Տիրոջը, մատուցում են զոհաբերություն և օգնում են իրենց մերձավորին: Եվ հարց են տալիս իրենց՝ ինչու՞ ես պետք է այս բոլոր տառապանքները կրեմ: Ինչու՞ է իմ կյանքում ամեն ինչ ձախողվում: Ինչու՞ է Աստված դա թույլ տալիս: Արդյո՞ք սա պատիժ է: Մենք չենք հասկանում Աստծո ուղին: Ես կարող եմ ձեզ ասել, որ ինձ հետ բավականին շատ է այդպես պատահում: Ես հարցնում եմ Աստծուն՝ Ի՞նչ ես դու անում: Ի՞նչն է այս ամբողջի իմաստը:

Սուրբ Հոգին ասում է ինձ՝ Հավատա Աստծուն, բայց ոչ հին հավատի ձևով: Ըստ երևույթին հին հավատն էլ չի գործում, որը քեզ ասում է, որ դու օրհնված, երջանիկ ու առողջ կլինես, եթե դու միայն սիրալիր, ընկերասեր և հեզ լինես: Հավատա Քրիստոսին և վստահիր նրան: Քրիստոսը Աստծո շատ սիրելի Որդին է - բայց հիշեք, թե ինչ տառապանք կրեց: Որ Աստված քեզ սիրում է, դա չի նշանակում, որ դու երբեք չես տառապելու: Աստծո սերը բոլորովին այլ բան է անում: Աստծո սերը օգնեց Հիսուսին, որ հաղթահարի այն իրավիճակը, որում նա էր գտնվում, հավատարիմ մնալ և հավիտենական կյանքին արժանանալ:

Երբեմն մենք անհանգստանում ենք, երբ մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում աշխարհում: Մենք ստանում ենք այն տպավորությունը, որ չարի իշխանությունն ամբողջ աշխարհում աճում է, և ավելի շատ վատ բաներ են տեղի ունենում: Ի՞նչ պետք է անենք մենք: Աստծուն հավատանք, բայց հավատանք նաև Քրիստոսին: Ես նկատել եմ, որ որոշ քրիստոնյաներ կարծում են, որ աշխարհում տեղի ունեցող դժբախտությունների պատճառն այն է, որ մարդիկ չեն հետևում Աստծո կամքին: Ուրեմն՝ յուրաքանչյուրը պետք է հետևի Աստծո յուրաքանչյուր կանոնին և օրենքներին: Որոշները նայում են Աստվածաշնչին և արտագրում են բոլոր կանոնները, որոնց կարելի է գտնել այնտեղ: Իսկ եթե անհրաժեշտ է, հայտնաբերում են նաև նոր կանոններ՝ եթե դու այս բանն անես, եթե դու այն բանն անես, ապա Աստված քեզ կօրհնի, քո խնդիրները մի վայրկյանում կլուծվեն, ամեն ինչ լավ կլինի և աշխարհն ավելի լավը կդառնա:

Սրա հետ ես խնդիր ունեմ, քանի որ այն հին հավատն է: Հավատա Աստծուն, բայց հավատա նաև Հիսուս Քրիստոսին: Նա մեզ ասել է, որ չենք կարող փրկվել միայն այն բանի համար, որ պատվիրանները պահում ենք: Դա չի գործում: Փրկվելու համար պետք է ջրով ու Սուրբ Հոգով վերստին ծնվենք և Քրիստոսի պատկերով աճենք: Դու պետք է սովորես

Առաքյալ Արնաուդ Մարթիգը նշանակվեց շրջանային առաքյալի օգնական Կանադայի շրջանային առաքյալի աշխատանքային տարածաշրջանի համար

Աստծուն և քո մերձավորին ճիշտ ձևով սիրել, իսկ դրա համար դու պետք է փոխվես: Հիսուսը մի օր նորից է գալ;ու և նրանց, ովքեր ջանացել են դառնալ այնպիսին, ինչպիսին ինքն է, իր հետ տանելու է Աստծո թագավորություն: Սա է փրկությունը:

Խոսքն այն մասին չէ, որ պետք է օրենքների և պատվիրանների շարքը պահեն, քանի որ շատ մարդիկ թեև հարգում են օրենքները, բայց այլ է նրանց սրտի կարգավիճակը: Ինչպիսի՞ն է նրանց սերը մերձավորի հանդեպ: Ինչքան շատ են նրանք հարգում օրենքները, այնքան ավելի քիչ սեր են ունենում, այնքան ավելի քիչ են հասկանում ուրիշներին, ովքեր այդ նույն օրենքները չեն հարգում: Ոչ, սա ճիշտ ճանապարհը չէ: Մենք պետք է դառնանք Հիսուս Քրիստոսի նման և հետևենք այն ճանապարհին, որը նա մեզ ցույց կտա, նրա Ավետարանին, նրա առաքյալներին, նրա խորհուրդներին: Դա է փրկության, հավիտենական կյանքի ճանապարհը: Հավատա Աստծուն, բայց, խնդրում եմ, հավատա նաև Հիսուս Քրիստոսին ու նրա ուսմունքին:

Առակներից մեկում Հիսուսը խոսում է մոլախոտի և ցորենի մասին: Այդ մոլախոտը ևս կարող է անհանգստացնել մեզ: Կան երևույթներ, որոնք եկեղեցում սխալ են ընթանում, ես էլ եմ դա տեսնում: Շատերը կարծում են, որ նրանք, ովքեր իրենց այնպես չեն պահում, ինչպես պետք է պահեն, կամ պետք է փոխվեն կամ հեռանան եկեղեցուց: Եկեղեցին նման պահվածքը չի հանդուրժում: Ես պետք է հարց տամ՝ դու վստա՞հ ես, որ նրա մեղքն ավելի վատն է, քան՝ քոնը: Ինչքա՞ն հաճախ է Աստված քեզ ասել, որ դու պետք է փոխվես: Պատկերացրու, որ Աստված եկել է քեզ մոտ և ասում է՝ փոխվիր կամ գնա: Ես ձեզ ասում եմ, որ եկեղեցին կդատարկվի: Ես կարող եմ ձեզ վստահությամբ ասել, որ ես այնտեղ չեմ լինի:

Հավատա Աստծուն, բայց հավատա նաև Հիսուս Քրիստոսին: Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցրել է՝ դու պետք է պահես պավիրանները, բայց ամենից առաջ սիրիր Աստծուն և սիրիր քո մերձավորին: Աստված սիրում է քո մերձավորին, անգամ, եթե նա չի փոխվում: Աստծո սերն առանց նախապայմանների է, և նա ուզում է, որ դու սիրես քո մերձավորին, անգամ, եթե նա չի ուզում փոխվել: Ցույց տուր նրան, ցույց տուր Աստծուն, ցույց տուր մարդկանց, որ դու ունակ ես Հիսուս Քրիստոսի նման սիրելու - նաև մեղավորներին, ովքեր չեն ուզում փոխվել:

Հիսուսն անգամ ասում է՝ Սիրեք ձեր թշնամուն: Դա հենց այն էր, ինչ նա սպասում էր իր աշակերտներից՝ սիրիր առանց որևէ նախապայմանի: Աստված սիրում է մեղավորներին, մինչև վերջ նա սիրելու է նրանց: Նա ուզում է, որ մենք նմանվենք Քրիստոսին և նույն ձևով սիրենք: Հասկանու՞մ եք, թե ինչ նկատի ունեմ: Այն միտքը, որ մարդիկ կամ պետք է փոխվեն, կամ պետք է հեռանան, լիովին հակասում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Դա ընդունելի չէ: Հավատացեք Աստծուն, և հավատացեք Քրիստոսին: Մեզ կարող է նաև անվստահություն տալ այն, եթե մենք տեսնում ենք, որ առաքյալների կողմից ղեկավարվող Նորառաքելական եկեղեցին որոշ տեղերում հաջողակ չէ: Կան այնքան շատ այլ եկեղեցիներ կամ միաբանություններ, որոնք ավելի հաջողված են, որոնք ավելի շատ անդամներ ունեն: Ընդհանրապես, ճի՞շտ է արդյոք մեր ուսմունքը: Համապատասխանու՞մ է այն Աստծո կամքին: Պետք չէ՞ արդյոք ուրիշ այլ եկեղեցի այցելել:

Հավատացեք Աստծուն, և հավատացեք Հիսուս Քրիստոսին: Մարդկային չափանիշներով հավանաբար այլ եկեղեցիներն ավելի հաջողված են, այդ եկեղեցիները լի են: Բայց հիշեք Հիսուս Քրիստոսին: Ինչքա՞ն հաջողակ էր նա: Վերջում ընդամենը մի բուռ մարդիկ էին, որ կանգնած էին խաչի մոտ: Մյուսներն ասում էին, որ նա կորած է: Երևում է, որ Աստված նրա հետ չէ: Հիսուսը միայնակ էր, և նա սպանվեց: Մենք գիտենք պատմության վերջը: Հիսուս Քրիստոսը հաղթողն էր: Այո, նրանք նրան սպանեցին: Այո, նա միայնակ էր: Բայց նա հաղթեց, և ոչ ոք չկարողացավ նրան խանգարել իր գործը լիակատար ավարտին հասցնելու և մարդկանց փրկություն տալու: Հավատացեք Աստծուն, հավատացեք Հիսուս Քրիստոսին: Նա խոստացել է, որ մինչև վերջ իր եկեղեցու և իր առաքյալների կողքին է լինելու,

Շրջանային առաքյալ Միխայել Դեփփներ

Առաքյալ Կարլ Օրլոֆսկի

Շրջանային առաքյալ Ջոն Շնաբել

որ նա իր գործը, որը սկսել է մեզնով, լիակատար ավարտին է հասցնելու: Դրան մենք հավատում ենք, անգամ, եթե եկեղեցին մարդկային չափանիշներով թույլ է թվում: Նա ուղարկել է իր առաքյալներին, որպեսզի տեղեկացնեն իր կամքը, նվիրաբերեն իր եկեղեցական խորհուրդները, նախապատրաստեն Քրիստոսի հարսնացուին: Այս ուսմունքի արժեքը մենք չենք կարող մարդկանց քանակով չափել: Դա անմտություն է: Այդ դեպքում Հիսուս Քրիստոսն էլ կդադարեցներ իր առաքելությունը:

Նա հաջողակ էր, որովհետև վստահում էր իր Հորը: Եկեղեցին լիակատար ավարտին կհասնի, եթե մենք վստահենք Հիսուսին և Աստծուն: Հիսուսն ուղարկել է իր առաքյալներին և խոստացել՝ մի անհանգստացեք, ես նախապատրաստելու եմ իմ հարսնացուին և ես նրան ինձ հետ եմ տանելու: Վստահեք Հիսուս Քրիստոսին և մի ենթարկվեք մյուսների թվացյալ հաջողակ լինելու տպավորությանը: Դա այն չէ, ինչի մասին որ խոսքը գնում է: Խոսքը գնում է փրկության մասին, դա է ամենակարևորը:

Ես չգիտեմ, թե այս երկրում ապրող քանի մարդ է համաձան Քրիստոսի հարսնացուական համայնքի մի մասնիկը լինելու: Ես գիտեմ միայն, որ Հիսուսը ցանկանում է, որ դու նրանց թվին պատկանես: Եվ, եթե մենք հավատում ենք Աստծուն և մինչև վերջ հավատում ենք Քրիստոսին, ապա մենք կդառնանք Քրիստոսի հարսնացուական համայնքի մի մասնիկը: Դա վստահ այդպես է: Մի անհանգստացիր: Հավատա Աստծուն: Հավատա Քրիստոսին և վստահիր նրան:

Վերջին կետը՝ երբեմն մեզ անհանգստացնում է այն, որ մենք չենք կարողանում պատկերացնել, որ կդառնանք այնպիսին, ինչպիսին Քրիստոսն է ուզում մեզ տեսնել: Եթե մենք ինքներս մեզ նայենք, տեսնենք մեր թուլությունները, թե ինչքան դժվար է մեզ համար Աստծո կամքը կատարելը և մեզ այնպես պահելը, ինչպես ուզում է Հիսուսը՝ ներել, սիրել, հաղթահարել, ինչպես նա է ուզում, ապա ոչ մի անգամ չենք հաջողի:

Հավատա Աստծուն, և հավատա Քրիստոսին: Նա քեզ կանչել է, նա քեզ ընտրել է, և նա ասում է քեզ, որ նա երբեք քեզ չի լքելու: Նա ուզում է՝, որ դու հավիտյան իր մոտ լինես: Եվ եթե դու որոշել ես նրան հետևել, նա կօգնի քեզ: Մենք մեր սեփական ուժերով չենք կարող կատարյալ դառնալ: Բայց, նա մեզ կատարյալ է դարձնելու:

Հավատարիմ մնալ այն ամենին, ինչ նա խնդրում է մեզ, հնազանդ լինել և սիրել: Անենք լավագույնը, որպեսզի մեր սերը Աստծո ու մեր մերձավորի հանդեպ մեծանա, և վստահենք նրա ողորմածությանը:Այն, ինչը մենք չենք կարող անել, նա կանի մեզ համար:

Հիմնական մտքեր

Մենք հավատում ենք Աստծուն և Հիսուսի ուսմունքին: Աստված նրանց է նվիրում հավիտենական կյանք, ովքեր հավատում են Քրիստոսին և հետևում են նրան: Մենք վստահում ենք Քրիստոսի սիրուն, նրա եկեղեցուն և նրա առաքյալներին:

Ժամանակն է բարին անելու

Հնչեղ լավ լուրեր՝ Եվրոպայում երիտասարդները ծառեր են տնկում, Ասիայում օգնականները սերմեր են բերում հեռավոր շրջաններ, իսկ Աֆրիկայում ուսուցչական կազմը ինքն է վերադառնում դպրոց- նորություններ, որոնք կոչ են անում ընդօրինակման:

Լուսանկարները՝ ՆԱԵ ՍԵԱ Ռելիեֆ

Սերմեր հեռավոր գյուղերի համար

Ոչ վատ եղանակը, ոչ էլ վատ ճանապարհները չխոչընդոտեցին ՆԱԵ օգնականներին՝ սերմերը կարիքավորներին հասցնելու: ՆԱԵ - գերմանական բարեգործական կազմակերպության առաջադրանքով ֆիլիպինցի օգնականները ճանապարհ ընկան, որպեսզի հեռավոր վայրերի գյուղացիների և նրանց ընտանիքների համար եգիպտացորենի սերմեր տանեն, քանի որ ,, ամենօրյա հացը ,, ստանալու համար պետք է շատ մարտահրավերներ հաղթահարվեն, մինչ գյուղացիներըկարողանան հունձքն ու բերքը ստանալ : Սեբու-Զեեռում/ Ֆիլիպիններ/ քաղաքացիների հետ ժողովի ժամանակ կարողացան անգամ 756 ընտանիքի հասցնել - կարևոր աջակցություն կլիմայի փոփոխության պատճառով հնարավոր սովի դեմ պայքարում, -գրում է բարեգործական կազմակերպությունն իր կայքում:

25 - ամյա հավատը տոնել

Գարին թիվ 2 համայնքը 2024-ի հոկտեմբերի 13-ին Բուենոս-Այրեսում/Արգենտինա/տոնեցիրեկեղեցու գոյության 25-ամյակը: Մի ամբողջ շաբաթ ընթացան այդ մեծ տոնի նախապատրաստությունները՝ հավատացյալ քույր-եղբայրները մաքրեցին

Լուսանկարները՝ ՆԱԵ Արգենտինա

Տոնել համայնքի հոբելյանը

Երիտասարդները ծառեր են տնկում

Լուսանկարները՝ Վանեսա Շմիդթի

եկեղեցու շենքը, զարդարեցին ծաղիկներով և փուչիկների դեկորացիաներով: Այլոց թվում տոնական ժամերգությանը հրավիրված էր առաքյալ Կլաուդիո Գոնսալեզը: ,, Սիրելի եղբայրներ և քույրեր, ես ձեզ ամենայն բարիք եմ ցանկանում եկեղեցու ծննդյան առիթով,,- այսպես սկսեց նա իր քարոզը: Իր քարոզում նա ոչ միայն հայացք գցեց համայնքի պատմությանը, այլանդրադարձավ նաև ապագային՝ Հիսուս Քրիստոսով փրկությանը: Համայնքը տոնում էր ոչ միայն իր 25-ամյակը, այլ նաև երկու նոր պաշտոնների ձեռնադրումը՝ առաքյալը համայնքի համար ձեռնադրեց երկու սարկավագուհիներ:

Ժամանակն օգտագործել

Չինական մի ասացվածք ասում է՝ ծառ տնկելու լավագույն ժամանակը 20 տարի առաջ էր, իսկ երկրորդ լավագույն ժամանակը՝ հիմա: Այսպես, 2024-ի հոկտեմբերի 26-ին Էմդենի/ Գերմանիա/ շրջանի ,, Օսթֆրիզնյուգենդ,, -ի երիտասարդները վաղ արթնացան և ռետինե երկարաճիտ կոշիկներով ու բահերով սկսեցին աշխատել, որպեսզի նպաստ բերեն բնությանը և աջակցեն շրջակա միջավայրի պաշտպանությանը: Երիտասարդները տեղի Բրուկմերլանդ համայնքի հողատարածքում տնկեցին տասներկու խառը պտղատու և դաշտային թխկու ծառեր: Դա նրանք կատարեցին մեծ ուրախությամբ:

Կիրակնօրյա դպրոցը կարևոր է

Կիրակնօրյա դպրոցը կարևոր է, այս էր գրված այն կրծքանշանի վրա, որը ստացան Արևելյան Սոմերսեթ / Հարավային Աֆրիկա/ մարզի կիրակնօրյա դպրոցի ուսուցիչները: Շրջանային առաջնորդ Էուգենե Ֆելքերսը Շաունեեն Բաատյեսի առաքելական տարածաշրջանի կիրկանօրյա դպրոցի համակարգողի և քույր Ամանդա Շարնեքի հետ միասին 2024-ի նոյեմբերի 9-ին անցկացրեց աշխատաժողով աշխատանքերի կատարման և պատասխանատվության մասին: Շրջանի կիրակնօրյա դպրոցի ուսուցիչները ավելի լավ յուրացրին իրենց դերը և տեղեկացան, թե ինչպես կարող են վստահելի անձանց առաջնորդել:

Զեկուցումից հետո օրվա գագաթնակետն էր կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների գնահատանքը իրենց անցած տարիներին կատարած քրտնաջան աշխատանքի և նվիրումի համար: Կրծքանշանի հետ միասին ուսուցիչներին պատվեցին վկայականներով: Վերջում կազմակերպվեց միասնական ճաշկերույթ:

Շնորհակալություն ուսուցչական անձնակազմին

Լուսանկարը՝ ՆՅԵ հարավային Աֆրիկա

ՀԻՍՈՒՍՆ ԱՅՑԵԼՈՒՄ Է ՄԱՔՍԱՎՈՐ ԶԱԿՔԵՈՍԻՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19, 1-10-Ի

Հիսուսը գնում էր Երիքով: Այնտեղ մի հարուստ մարդ էր ապրում: Նրա անունը Զակքեոս էր, և նա մաքսավոր էր:

Երբ Հիսուսն աշակերտների հետ գնում էր փողոցով, շատ կանայք, տղամարդիկ և երեխաներ էին այնտեղ հավաքվել: Բոլորն ուզում էին տեսնել Հիսուսին:
Զակքեոսն էլ էր ուզում, բայց հրմշտոցի պատճառով նա չէր կարողանում տեսնել, քանի որ նա կարճահասակ էր: Դրա համար նա վազում է դեպի թթենու ծառը և բարձրանում վրան:
Երբ Հիսուսը մոտենում է ծառին, վերև է նայում և ասում՝,, Զակքեոս, արագ ցած իջիր, ես ուզում եմ քեզ այցելել,,:
Զակքեոսը ուրախանում է, որ Հիսուսը հենց իրեն է ուզում ալցելել, իսկ մյուս մարդիկ զայրանում են: Նրանք սկսում եմ կշտամբել՝ ,, Հիսուսն այցելում է նման մեղավորին,,:
Զակքեոսը զղջում է, որ որպես մաքսավոր միշտ ավելի շատ փող է վերցրել մարդկանցից:
Նա ասում է Հիսուսին՝ ,, Իմ ունեցածի կեսը ես կտամ աղքատներին, և, եթե ես որևէ մեկին խաբել եմ, ապա ես նրան քառապատիկ անգամ ավելին կվերադարձնեմ,,:

Աղբյուրը՝ Ամառգիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02 2025, ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԵՈՆԱՐԴԻՆ՝ ՔԻՆՍԵՅԼՈՒՄ / ԻՌԼԱՆԴԻԱ/

,,Ողջույն, իմ անունը Լեոնարդ է,, : Այսքան անգլերեն գիտեի ես, երբ ժամանեցի Իռլանդիա: Ես ինը տարեկան եմ և կես տարով իմ 13-ամյա քրոջ՝ Կիմի և ծնողներիս հետ ապրելու եմ Քինսեյլում՝ Իռլանդիայի հարավային ափին:

Այստեղ դուք տեսնում եք ինձ իմ մեծ քրոջ հետ՝ դպրոցական մի օր: Մենք կրում ենք դպրոցական համազգեստ, որն այստեղ պարտադիր է դպրոցական բոլոր երեխաների համար: Այն, որ իմ դասղեկը դարձավ մեր դպրոցում միակ գերմանախոս ուսուցչուհին, ինձ համար գեղեցիկ անակնկալ էր: Իմ հայրը կարծում է, որ միայն սիրելի Աստված կարող է այդպիսի արտակարգ բան կազմակերպել:

Ես եռանդուն արհեստավոր եմ: Այստեղ դուք ինձ տեսնում եք բնակարանը մեկուսացնելիս: Ես նաև հաճույքով մագլցում եմ և լողում, ֆուտբոլ եմ խաղում ու հեծանիվ վարում: Այստեղ, ընդհանուր առմամբ, հեծանիվ վարելը շատ վտանգավոր է, քանի որ երկու կողմից քարե պարիսպներով նեղ ու ոլորապտույտ փողոցներում ավտոմեքենաները հեծանիվ վարողներին տեղ չեն տալիս:

Մենք կարոտում ենք Շվեյցարիայի մեր ընկերներին: Սակայն, այստեղ մարդիկ սիրալիր են, իսկ մենք արդեն ծանոթացել ենք մի քանի երեխաների հետ: Փոքր երեխաների հետ ես կարողանում եմ հաճույքով խաղալ: Իմ հասակակից երեխաների հետ ինձ համար դժվար է շփվելը: Ես ունեմ Դաունի համախտանիշ՝ դա նշանակում է, որ ես չեմ կարողանում լավ խոսել, իսկ դրանից մյուս երեխաները ձանձրանում են:

Ամեն երեկո մենք լողափ ենք գնում: Շատ իռլանդացիներ ողջ տարին ջուրն են մտնում, անգամ, երբ ձմռանը ջերմաստիճանը 10 աստիճանից ցածր է լինում: Նրանք կարծում են, որ կարելի է դրան վարժվել: Ինձ համար ավելի գեղեցիկ է, երբ ալիքներն ինձ սերֆինգի տախտակով մինչև ափ են քշում:

Շատ իռլանդացիներ շներ ունեն, որոնց հետ ես լողափին կարողանում եմ խաղալ: Ջրում կան ջրային շներ:

Կորկի մեր փոքր համայնքում յուրաքանչյուր երկրորդ կիրակի ժամերգություն ենք ունենում: Մնացած կիրակիներին տանը համակարգչով ժամերգություն ենք նայում: Ես դա այնքան էլ գեղեցիկ չեմ համարում: Ես արդեն կարոտում եմ Բազելի մոտ գտնվող իմ հայրենի Ռիհենի համայնքի կիրակնօրյա դպրոցը:

Եթե իմ մայրը դեմ չլիներ, հայրս և ես կարող էինք ամեն օր սոուսով վերմիշել ուտել: Բայց մենք փորձում ենք տեղեկան բոլոր ուտեստները ձկով, կարոֆիլով կամ կաղամբով բազմազանության համար: Շատ դեպքերում դրանք բոլորովին էլ վատ համ չեն ունենում:

Փետրվարին ես նորից գնալու եմ իմ հին դասարանը և հաստատ կարող եմ ավելի շատ անգլերեն խոսել, քան առաջին օրն այստեղ՝ Իռլանդիայում:

Աղբյուրը՝ Անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02 2025; լուսանկարները՝ մանավոր՝ robertsre/Richard/susanne2688/ by-studio/Cristi/stock.adobe

Լուսանկարը՝ Մայլել - stock.adobe

Ճիշտ վերարտադրել Աստծո կամքը

Ժամերգության հիմնական կետը Աստծո խոսքի տեղեկացումն է: Սակայն, եթե անգամ քարոզն ազատ խոսքով տարվի, այն չի կարող լինել կամայական: Այս ուսուցողական շարադրանքում գլխավոր առաքյալը պարզաբանում է, թե ինչպես պետք է կատարվի խոսքի ճիշտ տեղեկացումը:

Դավանաբանությունը խոսքի ճիշտ տեղեկացումը ներկայացնում է որպես առաքելոց ծառայության բնորոշիչ/ ՆԱԵԴ 6,4,2,3/: Տերն ուղարկել է առաքյալներին և նրանց ուսուցանելու առաջադրանք տվել: Նրանք պետք է Սուրբ Հոգու ուժով տեղեկացնեն Ավետարանը Հիսուս Քրիստոսի ծննդյան, կյանքի, մահվան, հարության, համբարձման և գալստյան մասին: Երբ առաքյալը ձեռնադրում է հոգևորականի, Սուրբ Հոգու ուժով նրան է տալիս խոսքի ճիշտ տեղեկացման լիազորությունը: Ձեռնադրված հոգևորականները այդ պահից սկսած կարող են քարոզել Ավետարանը ժամերգության ժամանակ և հոգին խնամելու նպատակով այցերի ժամանակ հաղորդել Աստծո խոսքը:

Համապատասխանել Աստվածաշնչին

Խոսքի տեղեկացումը ճիշտ ձևով կինի միայն այն դեպքում, երբ այն համապատասխանի Աստվածաշնչին, հատկապես, Հիսուս Քրիստոսի խոսքերին, ինչպես մեզ ավանդված է Նոր կտակարանում:

Սուրբ գրքի հետ համապատասխանությունը չի կայանում նրանում, որ բառացիորեն կրկնվի: Խոսքն ավելի շատ այն բանի մասին է, որ հավատարիմ մնան Ավետարանի պատգամին: Դա կարող է հաջողել միայն այն դեպքում, երբ աստվածաշնչյան տեքստերը Սուրբ Հոգու լույսի ներքո մեկնաբանվեն:

Մենք հավատում ենք, որ Աստվածն է Սուրբ գրքի հեղինակը: Սուրբ Հոգի Աստվածն է, որ ոգեշնչել է հեղինակներին: Այն տարբեր գրքերը, որոնցով հավաքագրվել է Աստվածաշունչը, կրում են իրենց հեղինակների ու այն դարաշրջանի ազդեցությունները, որոնց ժամանակ հրատարակվել են: Տեքստերում երևում են՝

- տվյալ ժամանակաշրջանի ,, գիտական ճանաչողությունները,,- Հին կտակարանում երկիրը դիտարկվում էր որպես տիեզերքի կենտրոն, որի շուրջը պտտվում են արևն ու լուսինը: Ավետարանները, օրինակ, էպիլեպսիան ներկայացնում էին որպես չար ոգու արտահայտում:
- ժամանակաշրջանի սոցիալական կառուցվածքը և սովորույթները- օրինակ, Պողոսը խնդրահարույց չի դարձնում ստրկությունը; տղամարդիկ ունեն կարճ մազեր, կանայք՝ երկար:
- հեղինակների անհատականությունն ու տեսակետները - Մատթեոսն ուզում է հրեաներին այն բանում համոզել, որ Հին կտակարանը Հիսուսով է իրականացել: Մարկոսը դառնում է հեթանոսներին բավականին պարզ լեզվով, մինչդեռ Ղուկասը գրական լեզվով է դիմում կուլտուրական մարդկանց, և շեշտում է կանանց ու աղքատների կարևորությունը:.

Որպեսզի հասկանան Աստվածաշնչի պատգամը, կարևոր է դիտարկել մարդկային գործոնը: Եթե այդ սկզբունքն ուշադրությունից դուրս թողնեն և սահմանափակվեն միայն աստվածաշնչյան տեքստերի բառացի արտահայտված մտքով, կարող են դրանք հանգեցնել անհեթեթ հայացքների: 17-րդ դարում եկեղեցին Գալիլեո Գալիլեյին դատապարտեց այն բանի համար, որ նա ուսուցանում էր, որ երկիրն է պտտվում արեգակի շուրջը: Հռոմի համար պետք է անդրադառնային աստվածաշնչյան տեքստերին / Սաղմոս 93,1;104,5; Հեսու 10, 12, 13/, որոնց համաձայն՝ արեգակն է պտտվում երկրի շուրջը:

Միայն Սուրբ Հոգին կարող է նրանց բացահայտել ճիշտ ըմբռնումը, ով ոգեշնչում է Սուրբ գիրքը: Աստված ուղարկել է Սուրբ Հոգուն, որպեսզի մարդկանց բացահայտի իր կամքը և նրանց համար բացի դեպի փրկություն տանող ճանապարհը: Ասում են, Գալիլեյը պաշտպանել է իրեն նրանով, որ բացատրել է, որ Սուրբ Հոգին չի ուղարկվել որպեսզի մեզ արևի և լուսնի ընթացքի մասին սովորեցնի, այլ՝ որ մեզ Հիսուսի աշակերտներ դարձնի: Եթե Աստվածաշունչը կարդացվի Սուրբ Հոգու լույսի ներքո, այն ցույց կտա մեզ դեպի փրկություն տանող ճանապարհը: Ձեր առաջադրանքը ոչ գիտությունը



Լուսանկարը՝ Սերգեյ Պավլիկովսկու - stock.adobe

Լուսանկարը՝ Բրո Վեկտորի -- stock.adobe

փոխելն է, ոչ էլ հասարակության համար կոնկրետ իրավական կամ սոցիալական մոդելներ տալը:

Հիսուսը Էմմաուսի -աշակերտներին բացատրել է, որ Հին կտակարանը պետք է մեկնաբանվի իրենով / Ղուկաս 24,27;44,45/: Մեզ համար Հին կտակարանը առանձնահատուկ նշանակություն ունի, եթե այն համապատասխանում է Ավետարանին այնպես, ինչպես ավանդված է Նոր կտակարանում:

Մենք հավատում ենք, որ առաքյալները՝ որպես ,, Աստծո գաղտնիքների տնտեսներ,, , / Կորնթացիներ Ա 4,1/ Հիսուս Քրիստոսից լիազորություն են ստացել մեկնաբանելու Սուրբ գիրքը: Առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ նրանք ուսուցանում են Աստվածաշնչից այն, ինչը որոշիչ է մեր փրկության համար:

Համապատասխանել ուսմունքին

,,Այսօրվա ժամանակներում գործող Հիսուսի առաքյալների քարոզը հիմնվում է Սուրբ գրքի գրվածքների վրա, նրանք առաջնորդվում են Սուրբ Հոգով իրենց ուսուցողական առաջադրանքը կատարելիս: Դրանից բացի, Սուրբ Հոգին առաքելոց ծառայությանը տեղեկացնում է նոր տեսակետներ Աստծո գործունեության և նրա փրկության պլանի մասին, որոնք թեև պարզաբանված են Սուրբ գրքում, բայց դեռ լրիվ բացահայտված չեն: Որպես կարևոր օրինակ՝ կարելի է նշել ննջեցյալների համար փրկության տեղեկացման մասին ուսմունքը: Իր պաշտոնից բխող ուսուցողական լիազորության շնորհիվ՝ գլխավոր առաքյալին է վերապահված Սուրբ գրքից տեղեկացնելու նմանատիպ պատկերացումները և բացատրելու Նորառաքելական եկեղեցու պարտադիր ուսմունքը,, /ՆԱԵԴ 1,3/:

Նորառաքելական եկեղեցին հիմնվում է Աստվածաշնչի գրվածքների վրա, համապատասխանորեն խորացնում է գիտելիքները Սուրբ գրքից, որոնք գլխավոր առաքյալի կողմից որպես ուսմունք բացատրվում են: Այն Նորառաքելական եկեղեցու դավանաբանության մեջ է ընդգրկվում և եկեղեցու պաշտոնական հայտարարությունների միջոցով մեկնաբանվում: Նորառաքելական եկեղեցու հոգևորականների քարոզը միայն այն ժամանակ է ճիշտ և առաքելական, եթե դրանք համապատասխանում են այդ ուսմունքին:

Ոգեշնչված լինել Սուրբ Հոգու կողմից

Սուրբ Հոգին մեզ տեղեկացնում է Հիսուս Քրիստոսի խոսքը, որը հավերժ վավերական է - Մարկոս 13,31/: Ավետարանի ճիշտ քարոզը խոսում է ոչ միայն փրկությունից, այլ այն հաղորդվում է մեզ: Ինչքան Ավետարանը առաքյալների և նրանց կողմից ձեռնադրված հոգևորականների կողմից ճիշտ ձևով քարոզվի, այնքան Աստված կհաստատի նրանց խոսքը: Այսինքն՝ բոլոր հոգևորականների համար, ովքեր կոչված են խոսքի ճիշտ տեղեկացմանը, որոշիչ է իրենց սրբացնելը, որպեսզի ի վիճակի լինեն Սուրբ Հոգու պատգամը հասկանալ ու համապատասխան ձևով փոխանցել: Սակայն, գիտակցենք, որ մենք՝ չնայած մեզ սրբացնելու մեր

Լուսանկարը՝ Շթոկգիրի- stock.adobe

ձգտումներին, միշտ էլ ոչ կատարյալ ենք մնում, թեև կարող է մեր քարոզը Սուրբ Հոգու կողմից ոգեշնված՝ իր իմաստով կատարյալ լինել, դա լավ է և ի վերջո արտահայտում է Աստծո կամքը: Մեր քարոզը արտացոլում է մեր անհատականությունը և մեր կյանքը, դրանք դրոշմված են մեզնով, ինչպես աստվածաշնչյան տեքստերը՝ իրենց հեղինակներով: Ես նշում եմ երկու օրինակ, որպեսզի մեկնաբանեմ:

Առաջինն այն է Պողոս առաքյալից, ով ամուրիներին և այրիներին խորհուրդ է տալիս չամուսնանալ / Կորնթացիներին Ա 7,8/: Նա ինքը ամուրի էր և կարծում էր, որ այդպես ավելի լավ է Տիրոջ գալստյանը նախապատրաստվել կարողանալու համար / Կորնթացիներ Ա 7, 32,34/: Նա լավ է համարում նաև այն, երբ տղամարդը սեռական հարաբերություն չի ունենում / Կորնթացիներ Ա 7,29/: Թեև նա հասկացնում է, որ ինքը Տիրոջ ոչ մի պատվիրան չի պահել / Կորնթացիներ Ա 7,25/, նա հիմվում է Սուրբ Հոգու վրա, որպեսզի իր կարծիքը հաստատի /Կորնթացիներ Ա 7,40/: Պատմությունը նրա կարծիքը չի հաստատել՝

- Եթե բոլոր քրիստոնյաները հետևեին նրա խորհրդին, ապա ոչ մի հետնորդ չէր լինի, եկեղեցին գոյություն չէր ունենա:
- Մենք չէինք կարող կասկածի տակ դնել ամուսնացած տղամարդկանց և կանանց պարտականությունները, ովքեր եկեղեցում ծառայում են Տիրոջը:.

Երկրորդ օրինակը գլխավոր առաքյալ Բիշոֆֆի կողմից է: Նա անմիջականորեն հավատում էր Տիրոջ առաջիկա գալստյանը և համոզված էր, որ Հիսուսը գալու է իր ապրած կյանքի ընթացքում: Այդպես չեղավ, այսօր մենք գիտենք, որ այդ անձնական համոզվածությունը երբեք չպետք է ուսմունքի մեջ վերհանվի: Երկու դեպքում էլ պատգամները նույնն են, որոնք գալիս էին Սուրբ Հոգուց՝ Տերը շուտով գալու է, պատրաստ եղեք: Այս ավետիսը միշտ վավերական է: Բայց քարոզի այն մասը, որն արտացոլում է անձնական կարծիքը, չի իրականանում: Միշտ չէ, որ հնարավոր է և ցանկալի էլ չէ, որ անձնական զգացումները քարոզից վանեն: Պարզապես ուշադրություն դարձնենք այն բանի վրա , որ տարբերենք Ավետարանի քարոզը, որը տեղի է ունենում պաշտոնի լիազորության հիման վրա և մեր սեփական մտքերը, որոնք կարող են շատ կամ քիչ հիմնավոր լինել:

Կարող է դա լինել նաև այն դեպքում, երբ հոգևորականը վստահեցնի հիվանդին, որ նա առողջանալու է: Նման խոստումը արտացոլում է մարդու կարեկցանքը և հիվանդին քաջալերելու ցանկությունը: Այս պարագայում հոգևորականները չեն կարող իրենց պաշտոնի լիազորության հիման վրա դա համարել խոսքի ճիշտ տեղեկացում: Տերը մեզ ուղարկել է, որպեսզի մխիթարենք հավատացյալներին, նրանց հավատը ուժեղացնենք և նրանց գալստյանը նախապատրաստենք: Նա մեզ չի ուղարկել, որ հրաշքներ կատարենք կամ դրանք տեղեկացնենք:

Նկատելի է նաև, որ սրբացումը վերապահված է ոչ միայն հոգևորականին, ով կոչված է քարոզի: Հավատացյալներն էլ պետք է սրբանան, որպեսզի կարողանան Ավետարանի ճիշտ քարոզից լիովին օգուտ ունենալ: Եթե իրենց թույլ տան առաջնորդվել Սուրբ Հոգով, նրանք կարող են Ավետարանի ճշմարտությունն ըմբռնել՝ չնայած իրենց մարդկային թերություններին, որոնք կարող են տեղ գտնել քարոզում: Այդպես նրանց հավատը կուժեղանա և իրենց հոգիները կնախապատրաստվեն Քրիստոսի գալստյանը:.

Եզրակացություն՝

հոգևորականը ձեռնադրությամբ ստանում է Ավետարանը ճիշտ ձևով տեղեկացնելու լիազորություն:

Խոսքի ճիշտ տեղեկացումը բնորոշվում է նրանով, որ քարոզը պետք է համապատասխանի Ավետարանին և Նորառաքելական եկեղեցու ուսմունքին: Նորառաքելական ուսմունքը արդյունք է առաքյալների կողմից Սուրբ Հոգու ուժով Սուրբ գրքի մեկնաբանության: Այն գլխավոր առաքյալի կողմից սահմանված և վերջնականորեն ամրագրված՝ հստակ արտահայտված է եկեղեցու հրապարակային հայտարարություններում, հատկապես՝ դավանաբանության մեջ: Հոգևորականները պետք է իրենց սրբացնեն, որպեսզի ճանաչեն Աստծո պատգամը և այն անսխալ փոխանցեն: Համայնքը պետք է սրբանա, որպեսզի Սուրբ Հոգու պատգամն ընդունի և ուժեղանա:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Տեղեկատու

06.04.2025	Բրյուսել (Բելգիա)
18.04.2025	Մելբուրն (Ավստրալիա)
20.04.2025	Բրիսբանե (Ավստրալիա)
02.05.2025	Լուանդա (Անգոլա)
04.05.2025	Սաուրիմո (Անգոլա)
11.05.2025	Սիգիիսոարա (Ռումինիա)
23.05.2025	Սեշեկե (Զամբիա)
24.05.2025	Սերենյե (Զամբիա)
25.05.2025	Լուսակա (Զամբիա)
01.06.2025	Մոսկվա (Ռուսաստան)
08.06.2025	Վիսբադեն (Գերմանիա)
20.06.2025	Պուրվոկերտո (Ինդոնեզիա)
22.06.2025	Յոգյակարտա (Ինդոնեզիա)
29.06.2025	Ինգոլշթադթ (Գերմանիա)

New Apostolic Church
International